## 52. ԾՈՒՌ ԿՆԻԿ

Կէլնի մեյ խա իրիկ, կնիկ: Կնիյ ծուռ կէլնի: Մեկ օր իրիկ կէրթա̈ պա̈նե. պանելա̈տեղ մե խա ոսկի ցից, ոսկի գյլուլա կկնդնի: Կպիրի տուն, կուտա կնգյա̈ն:

Կասի. - Կնի՛կ, աստծու սիրուն էլնի, խորոտ պախես, չէլնի մարթու տաս:

Մեկ օր կմնա, աջամ կուգյա փողան. չանաղ կծախի: «Չանաղ առեքյ, չանաղ», որ կբոռա, կնիյն շուտ ոսկի ցից. ոսկի գյլուլեն կառնի կէրթա, կասի ա̈ջման. - Էսրան կյանի՞ խա չանաղ կուտաս:

Ա̈ջամ, որ կտիսնա ոսկի ցից, ոսկի գյլուլեն, կառնի խետ ուր իշուն. կէրթա̈:

Կնիյն ի կուրախանա, կառնի չանաղներ. կէրթա̈ ներս, դարբար կճրջնի, կավիլի. չանաղներ պո̈կլոր-պիլոր կշարի, ալնխներ կպռնի ծեռ. կկայնի մեչտեղ. կխաղա:

Իրիյ կուգյա, տոտ կզանի, էն ճա՛ կխաղա. ներսանց կասի՝ «Ա̈ջամ խա̈բիր եմ, ա̈ջամ խաբիր եմ»:

Կասի. - Տո ջա՛նմ, տոտ պաց. էն ի՞նչ ես արե, որ աջամ խաբիր ես:

Կասի. - Էն ոսկի ցից, ոսկի գյլուլեն տվիցի. էսա կանդար չանաղն առիցի:

Իրիյն ի կպա̈րկւնա, քիչմ ուշունց կուտա:

Քյաշի կնգյա̈ն աղեյմ էլ թփի, կնիկ ինատ կանի, կէրթա̈ նստի տանիս: Կատուն կէրթա̈ նստի խե կշտին, կտփի, կասի. - Նռնա̈ու՛ խաթուն, կնա̈ ասա՝ չեմ իգյա̈:

Էն գիտի, թե իրիյն ի ճա̈մբխե: Քիչմ կմնա, շուն կէրթա̈ խե կշտին: Ծան կտփի, կասի. - Հա̈վճա̈վ սանախեր, կնա՛. ասա՝ չեմ իգյա:

Մեկ օր թակավորու խազինեքյ կառնեն փողընքտերաց մեչ կփռացուցեն:

Էդա մարթ յիտվանց մեկ ուղտ կքյա̈շի տուն. կասի. - Էլնեմ էնա ծուռ կնիյ բերեմ տակ, էն խետ տիսնալուն կասի:

Ուղտ կխճի փա̈րգյա̈խ. կէլնի կայնի վեր թա̈րա̈նջին, կնգյա̈ն կկանչի:

Կասի. - Տնավե՛ր, քյելի. արե տակ, մկա քյարե կարկուտ կուգյա̈:

Կնիյն էլ կբերի խճի թոներ, կաշին կթա̈լի վեր թորվան բերնին, քիչմ էլ գյա̈րի կլցի վերեն. խավեր կթողնի վերեն, ինքյ կէրթա̈. ոսկի կտեղավորի, ուղտն էլ կմորթի; լցի ամյճդեր, կուգյա̈ կաշին կվերուցի, կասի. - Կնի՛կ, էլի քյարե կարկուտ դադրավ:

Թակավորն ի կէլնի դալալ կուտա կանչել. կասի. - Վով իմ ուղտ կնդնի, ուր պերան ինչ պռնի՝ ես տամ:

Պառավմ կասի. - Ես կկնդնեմ:

Փողնի վիրին գլխուց դոներ կափի. կասի. - Վիր տուն միս կա, խիվնդի խամար մեյ կտոր միս տվեքյ:

Կուգյա էսա ծուռ կնգյան մոտեն էլ կուզի, կնիյն կէլնի միս կուտա:

Պառավն էլ ծեռ արնոտ կքսի տռան ճակատ. տուռ կնշանի, թողնի կէրթա:

Մարթն ի կուգյն, կասի. - Կնի՛կ, էսա ի՞նչ արուն ի վեր մե տռան ճայտին:

Կնիյ կասի. - Պառավմ էկավ, խիվնդի խամար միս ուզեց, տվիցի. ծեռքյեր արունոտ էր, քսեց դնն:

Մարթն ի կասի. - Ասպած քյո տուն ավիրի, ես ինչխ անեմ խե քյե:

Կէլնի արուն կլցի մեչ խոտին, կիշերով ըմեն տռան ճայտին արուն կքյսի:

Պառավն ի առատուն կառնի զնվթիեքյ, կուգյան, որ տուն աչքեն, ուղտ կնդնեն, խանեն դուս:

Կուգյան կտիսնան. որ ըմեն տուռն էլ արունոտ ի: Զնվթիեքյ կասեն. - Ջա՛նմ, էն ցնթուկ պառավ սուտ կասի:

Թողնեն կէրթնն, էն մեկէլ օր մեկ էլ դնլալ կկանչի, խեւռ որ սա ծուռ կնիյ կլսի, բռուս կասի. - Իմ իրիյն ի կնդե, իմ իրիկ:

Կխարցուցին՝ Քյո իրիկ որտե՞ղն ի:

Կասի. - Կնացեքյ փլան տեղ գյեռ կպննի:

Կէլնեն մարթուն կպռնեն, կառնեն կէրթան:

Մարթ կպիրեն, որ տռնեն կընցնի՝ «Կնիյ, գյեռ զի պռնիցին կտանեն: Տռներաց մուղիաթ կաց, չէլնի թռնես պնց»:

Մարթն ի կտանեն ըյուքյմնթ կխարցուցեն, կասեն. - Էնա ուղտ ի՞նչխ տարար:

Կասի. - Ես խնբնր չեմ:

Կասի. - Ջնյի քյո կնիյն ասաց՝ իմ իրիյն ի կնդե:

Կասի. - Ջա՛նմ, իմ կնիյ ծուռ ի:

Կասի. - Որ ծուռ ի, կնցեքյ մեյ բերեքյ խենքյ:

Կելնեն կուգյնն, կնգյնն կասեն. - Էլի՛ էրթանքյ, քյո իրիյ քյե կանչի:

Կնիյն կէլնի փողնի տուռ կքյակի. չվան կթնլի, տուռ կշալկի. կէրթն ըյուքյմնթ:

Կուգյնն, որ թնրանչեն էլնեն, տուռ քյանմա կէլնի թնրննչենը վեր:

Կասեն. - Ջա՛նմ. տիր էսա տեղ նոր էլի:

Կասի. - Իմ մարթ զիկ ասե. տռան մուղիաթ կաց, ես չեմ թողնե պնց:

Տուռ կքյնշի. կտանի տնի ըյուքյմնթի օրթալղ: Իրիյ կասի. - Տո կնիկ. էդա տուռ ընչի՞, քյակիցիր. պիրիր էսա տեղ:

Կասի. - Թե տյու ասիցիր՝ տռներաց մուղիաթ կաց, ես էլ քյակիցի. պիրի որ մարթ չպնններ տուռ:

Մարթ կտնռնա թատավորին կասի. - Որ ես կասեմ ծուռ ի, տյուքյ չե՞քյ ավատա:

Կասի. - Աղե՛կ, տյու ծեն կտրի, ես ինոր պնն խարցուցեմ:

Կասի. - Ծո՛ կնիկ, եփ էր քյու մարթ էն ուղտ գյողացավ, իպեր:

Կվիրուցի թատավորին կասի. - Ե՛փ, էն օր ինչ քյու աչքեր ըիլին թեփ:

Կծծղան էտա ըյուքյմնթի մարթեր, կխանեն ոսկիմ էլ պաշխիշ կուտան. կառնեն ուրենց տուռ կէրթնն:

Մարթն ի ինքյ ուրեն կասի. - Նա՛ խսա. էսա դրվնն իմ կնիյ զի փրթուց:

Մեկ օր մարթն կմնա պարապ. կասի՝ էսօր ի՞նչ պննով էրթնմ աշխատեմ:

Կէլնի կէրթա գյերեզմաւմ կփորի, մեռել կխանի տյուս, բիրի կապի վեր իշուն, տանի խճի մեջ ցորնի արտին: Ընդեճեն էտա ցորնի տիրվանքյ կտիսնան, բոռան. - Տո խա՛յ, էտա էշ քյաշի, ցորեն կերավ: Մարթ ծեն չխանե, պառկեր ի էն տեղ մունջ:

Ցորնի տեր էնտեխեն կուգյա ճերսոտ, մեյ փետ կզանի իշու գլխուն:

Էսա մարթ կուլա, կբոռա. - Ամա՛ն, իմ ախպեր սպանիցիքյ, կէթամ կպողոքեմ: Մարթեր կինեն բառավան, կասի. - Մէրթա, կալոցին քյե էսա կնդյար ցորեն կպիրեն, եղ կպիրեն՝ մէրթն պողոքե:

Էդա մարթուն կխապլպեն, մեռել կտանեն խորեն:

Մարթն կասի. - Գյեռ ես կէրթամ, տյու մե խա մեքյ պիրե, ես կիտեմ ինչ կանեմ խե ծե:

Կմնա կալոցին, ցորեն, եղ, պանիր, խնձոր պնրին կպնռնուն սելեր, կառնեն կուգյան:

Մարթն ի կուգյն, կասի. - Կնի՛կ, էսօր պնմ իփի, էսա մարթեր գյնն ուտեն:

Կնիյ կէլնի պնշնր կպիրի կուտա ուտեն, կխարցուցի, կասի՝ կշտացաքյ:

Կասի. - Վոլն, տաւտո՛, չէ, որ կա՝ էլ պե:

Մեյ քյասա յել կպիրի, քիչմ էլ կպախի:

Իրիկուն տեղեր կշինի, որ քյնեն, որ առատուն էրթնն:

Կնիյ կկայնի վեր գլխներաց կապսպրի, կասի. - Ես ծե կքյնեցուցեմ էտատեղ, իմ աստվածն անի, որ տյուք ծեր տակ մոտտրեցիքյ, վով որ մուտրի, շրիդ կթնլեմ վիզ, կկախեմ:

Կասեն. - Չէ՛, տատո, խո մենքյ տղա չե՞նք:

Մարթեր նեղացույ կէլնեն կինեն խորանթը քյուն, տատոն կէլնի ճմնի դռներ կիշուցի: Հմեն դռնի մեջ մեյ շիրեփ պանջայ կլցի, կէրթն ուր տեղ կքյնի:

Կես կիշրին մարթեր կնքխեն, էն մեկ կբոռա, կասի. - Պուղո՛ւս, վոլլա՛, ես քյաքյած եմ:

Էն մյուս կասի. - Մարկո՛ւս, վոլլա՛, ես էլ քյաքյած եմ:

Ախր ճմեն էլ ծեն կուտւսն ծենի, կասեն. - Էլե՛քյ, փախեքյ, էսա անսպեռ կնիյ չի գյն մե կախի:

Իրենց սելեր, տավրներ կթռնեն իննոց, կթողնեն փախնեն:

